Ա Յ Ն Տ Ե Ղ

Ա յ ն տ ե ղ մ ի շ տ մ ո ւ խ է ր եւ խ ա ւ ա ր։
Երկինքը մ ռ ա յ լ, օդը խեղդիչ և ծ ա ն ր։
Ջոր ու ցամաք տափարակը շրջապատ ո ւ ա ծ էր մ ե ր կ ժ ա յ ռ ե ր ով եւ վ ի խ ա ր ի ս ա ր ե ր ով։

Այդ ժ ա յ ռ ե ր ի ճեղքերում տեղ տեղ երեւում էին փոշոտած ա ւ տ ա ս ա կ ը եւ վայրի մ ա ց ա ռ ը։

Եւ այնտեղ այնու ամենայնիւ ապրում էին մ ա ր դ ի կ։

Մ ռ ա յ լ, ինչպէս շրջապատող բնութիւնը, նոքա ահագին ճիգ էին թափում եւ ճանկռ ո ւ ա ծ, արիւնած ձեռքերով հերկում էին քարա, անբերրի հողը եւ ձգում էին ցորենի սերմեր, որպէս զի չմեռնին քաղցից։

Այնտեղ չէր ժպտում երկինքը, այնտեղ չէին ժպտում եւ մ ա ր դ ի կ։

Այնտեղ միշտ լսվում էր կիրճերից փչող քամու սրտամաշ լացը։

Այնտեղ եւ մ ա ր դ ի կ ու ժ ա ս պ ա տ ռ, ոսկոր ու կաշի դարձած՝ միշտ ախ էին քաշում ու հառաչում եւ այդ հառաչանքը նման էր քամու սրտամաշ լացին։

Այնտեղ ծնվում էին եւ մեռնում մ ա ր դ ի կ, ամբողջ սերունդներ, երբեք չտեսնելով արեւի վառ ճառագայթները, կանաչ դաշտերի հոտաւէտ ծաղիկները, չլսելով արտուտի ուրախ դայլայլները։

Բնութեան այդ խորթ զաւակները խարխափում էին յաւիտենական խաւարի մէջ եւ հալ ու մաշ եղած սանում էին իրենց չարքաշ կեանքի անգոյն օրերը։

——

Եւ ահա մի օր այդ խեղճերի մէջ երեւաց մի նորեկ։

Ո՞րտեղից էր նա,— ոչ ոք չգիտէր։

Պարթեւահասակ, պեղեցիկ, կրակոտ աչքերով, նա երեւաց այդ կիսամեռ մարդկանց մէջ եւ սկսեց քարոզել։

Նա քարոզում էր նոր մոքեր, նոր գաղափարներ։

Նա ասում էր, որ այլ եւս ապրել այնպէս, ինչպէս ապրում են այդ ողորմելիները,—անկարելի է։

Հարկաւոր է ձգտիլ դէպի նոր, լուսաւոր կեանք, հարկաւոր է թողնել այդ մռայլ, անհամբոյր տափարակը եւ անցնել լեռների միւս կողմը։

Այնտեղ կայ մի նոր, պեղեցիկ աշխարհ։

Այնտեղ ջինջ, կապուտակ երկինքում ցերեկով փայլում է ոսկեայ արեւը։

Իսկ գիշերով հանդարտ շողում է լուսնեակը, մեղմ սլսլում են բարձունքում ոսկեվառ ա ս տ ղ ե ր ը։

Այնտեղ հողը պարարտ է եւ բերրի։

Նա տալիս է իւր մշակին առատ հունձք։

Այնտեղ կան մշտադալար դաշտեր, խիտ, գարեւոր անտառներ, արծաթափայլ գետեր, կարկաչահոս աղբիւրներ եւ պլպղալից այգիներ։

— Եկէք ինձ հետ եւ ես կը տանեմ ձեզ Աւետեաց երկիրը. այնտեղ դուք կը տեսնէք մի հրաշագեղ կեանք եւ կ'ապրէք, ինչպէս վայել է ապրել մարդուս. այնտեղ ձեր զալուկ զէմքերին կը խաղայ ուրախ ժպիտը, այնտեղ դուք կը ծլէք ու կը ծաղկէք, կը ծլի եւ կը ծաղկէ եւ ձեր հոգին։

Այդ էր նորեկի քարոզը։

— Այնտեղ... լեռների միւս կողմը՝ ասում է անծանօթը, մոտածում էր ամբոխը,

Fonds A.R.A.M

ո՞վ գիտէ, ի՜նչ կայ այնտեղ... կարելի է ոչինչ չկայ. կարելի է այնտեղ աւելի վատ է, քան այստեղ, մեր տափարակում. այստեղ մենք գոնէ մի կերպ ապրում ենք, իսկ այնտեղ... ո՞վ գիտէ...

Եւ ամբոխը վախով, յուսահատ նայում էր հեռուի վիհխարի սարերին:

— Ինչո՞ւ էք լռել, որոտում էր Նորեկը, ինչո՞ւ էք տատանւում. դուք չէ՞ք հաւատում ինձ. դուք կարծում էք, որ իմ խօսքերը խաբուսիկ երա՞զ են, մի ցնո՞րք: Ախ ճե՜ր, նայեցէք ինձ. մի՞թէ ես նմա՞ն եմ ձեզ. տեսէք, ես յաղթանդամ եմ, ուժեղ, իմ հոգին զուարթ է, ես տեսել եմ երջանիկ օրեր, ես եկել եմ ձեզ մօտ լոյս աշխարհից, մինչդեռ դուք խարխափում էք խաւարի մէջ. ձեր կեանքը մի անվերջ մութ գիշեր է, եւ դուք դեռ տատանո՞ւմ էք. ի՞նչ էք կորցնում եթէ հետեւիք ինձ, ասացէք, ի՞նչ, այս մերկ ապառաժնե՞րը, այս անհամբոյր, մառախլապատ երկի՞նքը...

Եւ Նորեկը ձգեց մի արհամարհական հայեացք ամբոխի վրայ:

Վերջինս լուռ էր:

Այդ նոր խօսքերը, այդ Աւետեաց երկիրը, այդ անծանօթի խոստումները օտար էին ամբոխի սրտին, անծանօթ, եւ սարսափ էին ազդում նրանից:

— Դուք կրկին լուռ էք, օ՛ որքան խորը արմատացել է ձեր մէջ սարկուածեան ոգին. դուք անզօր էք թօթափել ձեր վրայից հնի սովորական կեղտը, փշրել ձեր շղթանները:

Շուարած, ակնապիշ, ամբոխը կրկին լուռ էր:

— Իմացէք, ձեր մութ կեանքում իմ գալուստը մի դիւթիչ երազ է, մի վատ ճառագայթ արեւի, որ պատահմամբ ընկնում է բանտարկեալի մութ նկուղը եւ մի վայրկեան լուսաւորում է մշտական խաւար, մռայլ հոգին... Դէ՛հ, եկէք ինձ հետ...

Ամբոխը լուռ էր:

Նորեկի աչքում փայլեց արցունքի շիթը:

Նա վերջին անգամ նայեց ամբոխին, որ սարսափում էր անցնել լեռների միւս կողմը եւ կուրօրէն հրաժարւում էր ապագայ բաղդից, նայեց երկար, տխուր, յուսահատ եւ դէմքով գնաց դէպի հեռաւոր լեռները:

Շուտով եւ անհետացաւ երեկոյեան մշուշի մէջ:

Իսկ ամբոխը դեռ անշարժ կանգնած էր նոյն իսկ տեղում, կանգնած էր լուռ ու մունջ եւ սարսափած նայում էր հեռուից սեւին տուղ լեռների հսկայ, բարձրաբերձ գագաթներին:

ԳԷՈՐԳ ԶՈՒԽՈՒՐ

Նոր - Նախիջեւան, 1929

Fonds A.R.A.M